

Միլենա Առուստամյան

Լոռու մարզի դատախազության դատախազ

ՇՈՐԹՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ¹

Համառոտագիր

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս իրականացվող քրեաիրավական ոլորտի բարեփոխումների համատեքստում կարևոր նշանակություն ունեն շորթման հանցակազմի ուսումնասիրությունը և ոլորտում առկա հիմնախնդիրների վեր հանումը: Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին տեղի ունեցած դատաիրավական բարեփոխումների հետևանքով մշակվել են մի շարք նոր օրենսգրքեր, որոնց թվում է նաև 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգիրքը: Ներկայումս գործող քրեական օրենսգրքով որոշակի փոփոխություններ են կատարվել սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական պաշտպանության, այդ թվում՝ շորթման ոլորտում: Հետևաբար, շորթման քրեաիրավական հիմնախնդիրների ուսումնասիրությունը ունի տեսագործնական կարևոր նշանակություն: Միևնույն ժամանակ, բացի շարադրվածից, պետք է ավելացնենք, որ շորթումը բոլոր ժամանակներում խոչընդոտել է ինչպես կազմակերպաիրավական ցանկացած ձև ունեցող իրավաբանական անձանց, այնպես էլ ֆիզիկական անձանց կենսագործունեությանը:

Աշխատանքի նպատակն է վերլուծության ենթարկել շորթման հանցակազմի քրեաիրավական բովանդակությունը, վեր հանել քննարկվող ոլորտում առկա խնդիրները, ինչպես նաև ներկայացնել ՀՀ գործող քրեական օրենսգրքով սահմանված շորթման հանցակազմի քրեաիրավական բնութագիրը: Շորթումը շարունակում է մնալ հանցագործություն, որն ունի լատենտայնության բարձր մակարդակ: Շորթման դեպքերից տուժած ոչ բոլոր անձիք են դիմում իրավապահ մարմիններին պաշտպանության այդ միջոցը համարելով ոչ արդյունավետ: Լատենտայնության բարձր մակարդակը թույլ չի տալիս դատախազություններ անել հանցագործության այս տեսակի իրական տարածվածության վերաբերյալ:

Սույն աշխատության շրջանակներում ուսումնասիրվել և ներկայացվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը և քննարկվել են շորթման հասկացության առանձնահատկությունները:

¹ Հոդվածը ներկայացվել է 01.09.2023 թ., գրախոսվել է 09.11.2023 թ.:

Վերլուծության են ենթարկվել շորթման հանցակազմի տարրերը, ինչպես նաև հետազոտվել են դրա ծանրացնող հանգամանքները, կատարվել են համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկներ, որոնք միտված են շորթման համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածի առավել հստակ սահմանմանը և գործնականում նման արարքների առավել դյուրին որակմանը:

Հիմնաբառեր- շորթում, շանտաժ, սպառնալիք, հափշտակություն, գույք, իրավունք, հանցագործություն, տուժող, պահանջ:

Ներածություն

Շորթումը, հանդիսանալով սեփականության դեմ ուղղված այլ հանցագործության տեսակ, ունի հանրային վտանգավորության մեծ աստիճան: Ցանկացած երկրում արտադրական հարաբերությունների հիմքը կազմում է սեփականությունը (շարժական կամ անշարժ գույքը), որի իրավունքը պատկանում է տարբեր սուբյեկտների:

Այս հանցագործության տարածվածությունը ժամանակի ընթացքում ընդլայնվել է՝ ոտնահարելով ավելի մեծ քանակությամբ անձանց շահեր: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և դրանց լայն կիրառությունը կյանքի տարբեր ոլորտներում նպաստել են այս արատավոր երևույթի տարածմանը, քանի որ հանցավորների առջև բացվել են իրենց ապօրինի պահանջների ներկայացման և դրանց կատարմանը հասնելու նոր ուղիներ:

Ներկայացված դիտարկումների լույսի ներքո կարող ենք նշել, որ սույն աշխատանքի թեմայի ուսումնասիրության արդիականությունը, ինչպես նաև տեսական ու գործնական նշանակությունը պայմանավորված են վերոնշյալ դիտարկումներով, ինչպես նաև այն փաստով, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքով որոշակի փոփոխությունների է ենթարկվել շորթման հանցակազմի քրեաիրավական բովանդակությունը:

Աշխատանքի ուսումնասիրության նպատակը և խնդիրները

Սույն աշխատանքի ուսումնասիրության նպատակն է վերլուծության ենթարկել շորթման հանցակազմի քրեաիրավական բովանդակությունը, վեր հանել քննարկվող ոլորտում առկա հիմնահարցերը, ինչպես նաև ներկայացնել ՀՀ գործող քրեական օրենսգրքով սահմանված շորթման հանցակազմի քրեաիրավական բնութագիրը:

Շարադրված նպատակի կենսագործմամբ էլ պայմանավորված են սույն հետազոտության ներքոնշյալ խնդիրները.

1. ուսումնասիրել և ներկայացնել շորթման՝ որպես սեփականության դեմ ուղղված այլ հանցագործության տեսակի քրեաիրավական բնութագիրը և քննարկել շորթման հասկացության առանձնահատկությունները,

2. վերլուծության ենթարկել շորթման օբյեկտի և օբյեկտիվ կողմի քրեաիրավական հիմնահարցերը,
3. ներկայացնել շորթման սուբյեկտի և սուբյեկտիվ կողմի քրեաիրավական բնութագիրը,
4. հետազոտել շորթման հանցակազմի ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքների որակման հիմնախնդիրները, ինչպես նաև ներկայացնել այլ հանցագործություններից շորթման հանցակազմի տարանջատման հիմնախնդիրները:

ԳԼՈՒԽ 1. ՇՈՐԹՄԱՆ՝ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՅԼ ՀՎՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§1.1. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական ընդհանուր բնութագիրը

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը²:

ՀՀ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքներ» բաժնում ամրագրված սույն հոդվածը ելակետային նշանակություն ունի տնտեսական հարաբերությունների սահմանադրաիրավական կանոնակարգման համար: Հետևաբար, սեփականության պաշտպանության քրեաիրավական միջոցների սահմանումը ունի առանցքային նշանակություն շարադրված սահմանադրաիրավական նորմի կենսագործման առումով:

Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Ինչպես նշվեց, սահմանադրական պահանջ է սեփականության բոլոր ձևերի (մասնավոր, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների սեփականության) հավասար պաշտպանությունը, որն իրականացվում է մի քանի ձևերով (ֆիզիկական, քաղաքացիաիրավական, վարչական և քրեական): ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը սահմանում է, որ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չհասխատող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով³: Սեփականատիրոջ իրավագործությունների մատնանշված եռամիաս-

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, էջ 2:

³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրք, HO-239, էջ 43:

նությունն ունի գիտագործնական կարևոր նշանակություն: Այն ապահովում է իրի նկատմամբ սեփականատիրոջ լիակատար գերիշխանությունը, նրա սեփականության ազատությունը:

Կարծում ենք, արդարացված է «Հ գործող քրեական օրենսգրքի որդեգրած այն մոտեցումը, որով սեփականության դեմ ուղղված հանցագործությունները բաժանվում են երկու խմբի՝ 1) հափշտակություններ և 2) սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ: Վերջին խմբում ընդգրկված հանցագործությունները հափշտակություններ չեն, սակայն գույքային վնաս են պատճառում սեփականատերերին: Ընդ որում՝ պետք է նկատել, որ վերոնշյալ խումբ հանցագործություններում, ըստ «Հ նոր քրեական օրենսգրքի, արմատական փոփոխություններ են տեղի ունեցել: Նախ՝ հարկ է նշել, որ «Հ քրեական օրենսդրության պատմության մեջ առաջին անգամ նոր քրեական օրենսգրքում տրվել է հափշտակության հասկացությունը, ինչն, անշուշտ, առաջընթաց է, քանի որ թույլ է տալիս հստակորեն սահմանազատել հափշտակությունները համարնույթ այլ հանցատեսակներից (օրինակ՝ շորթումից, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելուց և այլն): Այսպես, «Հ նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 16-րդ կետն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Հափշտակություն՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորն այդ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել»⁴: Ինչպես նկատելի է, նշված ձևակերպմամբ ավանդաբար հափշտակության հասկացության մեջ ներառված շահադիտական դրդումների կամ շարժառիթների մասին որևէ նշում չկա: Սա ամենևին պատահական չէ և պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև հափշտակությունների մեծամասնությունը կատարվում է շահադիտական դրդումներով, սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինն է դարձվում այլ շարժառիթներով, օրինակ՝ վրեժի, խանդի և այլն: Բացի այդ շարժառիթները, դրդապատճառները և ընդհանրապես մոտիվացիոն ոլորտը խոր հոգեբանական գործընթացներ են, որոնց իրական բնույթը հաճախ չի գիտակցվում անգամ հանցանք կատարած անձի կողմից, իսկ դրանք հանցակազմի հատկանիշ դարձնելը ավելորդ բարդացնում է հանցագործությունների որակման գործընթացը⁵:

§1.2. Շորթման հանցակազմի քրեաիրավական բնութագիրը

Շորթման հանցակազմի հանրային վտանգավորությունը պայմանավորված է նրանով, որ այն ոտնձգում է ոչ միայն սեփականության, այլև այնպիսի բարիքների դեմ, ինչպիսիք են անձի կյանքն ու առողջությունը, պատիվն ու արժանապատվու-

⁴ Տե՛ս «Հ քրեական օրենսգրք, ՀՕ-199-Ն, էջ 3:

⁵ Տե՛ս ««Հ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ., էջ 316:

թյունը, անձնական կյանքի անձեռնմխելիությունը: Շորթունը հանդիսանում է երկօրյեկտ հանցագործություն, այսինքն՝ ունի երկու անմիջական օբյեկտներ՝ հիմնական անմիջական և լրացուցիչ անմիջական:

Շորթման հիմնական անմիջական օբյեկտը սեփականության իրավունքն ապահովող հասարակական հարաբերություններն են, իսկ որպես լրացուցիչ անմիջական օբյեկտ կարող են հանդիսանալ անձի պատիվն ու արժանապատվությունը, անձնական կյանքի անձեռնմխելիությունը, առողջությունը ապահովող հասարակական հարաբերությունները:

Մեր կարծիքով հանցավոր վարքագծի մոտիվացիան կարևոր դեր է խաղում հանցագործության օբյեկտի սահմանման հարցում: Ուրիշի գույքին տիրանալու, գույքային օգուտ ձեռք բերելու ցանկությունը ընկած է շորթման կատարման հիմքում, իսկ սպառնալիքը և դրա իրագործումը նախ և առաջ միջոց են հանդիսանում շորթողի կողմից իր շահադիտական նպատակներին հասնելու համար:

Շորթման դեպքում պահանջի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրա իրականացումը ենթադրվում է ապագայում: Այլ կերպ ասած՝ նպատակին հասնելը շորթման ժամանակ վերաբերում է ապագային: Գրեթե բոլոր դեպքերում շորթողը, պահանջելով իրեն հանձնել գույքը կամ գույքային օգուտ տրամադրել, ցանկանում է դրանք որքան հնարավոր է շուտ ստանալ, սակայն դրա ստանալու կոնկրետ պահը մնում է անհայտ և ենթադրվում է մոտ ապագայում:

Գրականության մեջ մի շարք հեղինակներ, մասնավորապես՝ Օ.Կորյագինան այն կարծիքն է հայտնել, որ «պահանջ» հասկացությունը չի տալիս ամբողջական պատկերացում հանցավորի մտադրության վերաբերյալ, քանի որ շորթման ժամանակ հնարավոր է և՛ սկնարկ, և՛ խնդրանք⁶: «Պահանջ» հասկացության ոչ հաջող լինելու մասին է խոսել նաև Ս.Ելիսևեան, որն առաջարկում է այն փոխարինել քրեական իրավունքում առավել օգտագործվող «հարկադրանք» հասկացությամբ⁷: Ընդհանուր առմամբ, կարելի է համաձայնվել այս տեսակետի հետ, սակայն, կարծում ենք, որ «հարկադրանք» տերմինը կարող է առաջ բերել մի շարք նոր խնդիրներ՝ շատ դեպքերում դժվարություն առաջացնելով շորթունը հարակից հանցագործություններից սահմանազատելու հարցում: Բացառված չէ, որ եթե «պահանջ» տերմինը փոխարինվի «հարկադրանք» տերմինով, հանցագործության ավարտման պահը կարող է տեղափոխվել ավելի ուշ փուլ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ մեր կողմից ուսումնասիրված արտասահմանյան երկրների մեծ մասում օգտագործվում է ոչ թե «պահանջ» այլ «հարկադրանք» տերմինը (Բուլղարիա, Լեհաստան, Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա, Իտալիա և այլն): Կարծում ենք, որ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկրներից որոշների քրեական օրենսդրություններում շորթունը նկարագրված է նյութական հանցակազմով,

⁶ Ст'ю Корягина О. В., Уголовно-правовая и криминологическая характеристика вымогательства, 1998, էջ 17:

⁷ Ст'ю Елисеев С. А., Преступления против собственности по уголовному законодательству России. ISBN: 978-5-94552-180-3 Томск, 1999, էջ 363:

որտեղ ուղղակիորեն նշվում է, որ տուժողին պատճառվում է գույքային վնաս, իսկ «հարկադրանք» տերմինը ցույց է տալիս հանցագործության ավարտման ավելի ուշ փուլ, քան թե «պահանջ» հասկացությունը (Բուլղարիա, Շվեյցարիա):

Շատ դեպքերում շորթողը գույքը, գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջը տուժողին հայտնում է առանց սպառնալիք ներկայացնելու կամ սպառնալիքը կրում է քողարկված բնույթ, կամ էլ ներկայացվում է ակնարկների ձևով: Սպառնալիքը հանդիսանում է շորթման օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, որի բացակայության դեպքում բացակայում է նաև հանցակազմը: Սպառնալիքի ամփոփության կամ բացակայության գնահատման հարցում չափազանց կարևոր է հաշվի առնել տուժողի սուբյեկտիվ ընկալումը, ինչպես նաև հանցավորի դիտավորության ուղղվածությունը: Եթե տուժողը հանցավորի պահանջներից, գործողություններից հասկանա, որ դրանք չկատարելու դեպքում հանցավորը նկատի ունի իր նկատմամբ բռնության գործադրման կամ այլ գործողությունների կատարման սպառնալիք, և այն ընկալի որպես իրական ու միանգամայն իրագործելի, ապա սպառնալիքը ամփոփվում է:

Ս.Աբրոսիմովը պրակտիկայից բերում է մի շարք օրինակներ, որտեղ շորթողի պահանջները չեն ուղեկցվել որևէ կոնկրետ սպառնալիքով, ինչպես, օրինակ, «մենք իմացել ենք, որ դուք առևտրով եք զբաղվում, քաղաքում բոլորը մեզ վճարում են, հաջորդ ամսվանից սկսած դուք մեզ կվճարեք ամեն ամիս (նշվում է գումարի չափը)»⁸:

Հիմք ընդունելով այս հանգամանքը՝ մի շարք հեղինակներ, մասնավորապես Ի.Ռիժկովան⁹ և Ս.Աբրոսիմովը¹⁰, առաջարկում են շորթման համար պատասխանատվություն նախատեսող հոդվածը ձևակերպել հետևյալ կերպ. նշված հոդվածի առաջին մասը պետք է պատասխանատվություն նախատեսի ուրիշի գույքը, գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու անօրինական պահանջի համար՝ մեղմացնելով պատասխանատվությունը, իսկ երկրորդ մասով պատասխանատվություն նախատեսել սպառնալիքով ուղեկցվող շորթման համար: Կարծում ենք, այդ տեսակետը միանգամայն անընդունելի է, քանի որ այդ կերպ անհամեմատ ընդլայնվում է շորթման հանցակազմը՝ իր մեջ ներառելով գույքի պահանջի բոլոր դեպքերը՝ առանց բացառության:

Անդրադառնանք ՀՀ գործող քրեական օրենսգրքում շորթման հանցակազմում կատարված էական փոփոխություններին:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 258-ը պատասխանատվություն է սահմանում շորթման համար: Հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Շորթումը՝ անձի կամ ուրի-

⁸ St' u Abrosimov S., Проблемы ответственности за вымогательство // Законность. 1999. № 5. էջ 25:

⁹ St' u Ryjkova I. D., Вымогательство: теоретико-правовой анализ и криминологическая характеристика, 2008, էջ 164:

¹⁰ St' u Abrosimov S. Проблемы ответственности за вымогательство // Законность. 1999. № 5. էջեր 25-26.

շի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին հանձնելու կամ հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջը, որը կատարվել է՝ 1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, 2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով, 3) շանտաժով կամ 4) հարկադրանքի այլ եղանակով(...)¹¹:

Այս ձևակերպումն էականորեն տարբերվում է նախկին օրենսգրքում առկա շորթման հանցակազմից: Ընդլայնվել և հստակեցվել են թե՛ հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքների շրջանակը և թե՛ դրա կատարման եղանակները: Նոր ձևակերպման համաձայն՝ շորթումը բնութագրվում է որպես անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին հանձնելու կամ հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջ, որը կարող է իրականացվել մի շարք եղանակներով: Այս առումով՝ հարկ է նկատել, որ «Հ քաղաքացիական օրենսգրքի հոդված 132-ը, որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի տեսակ, նախատեսում է գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները¹²: Նոր իրավակարգավորմամբ՝ նախատեսվել է նաև հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջը, այսինքն՝ հստակեցվել է նախկին օրենսգրքում առկա «գույքային բնույթի այլ գործողություններ» ընդհանրական հասկացությունը, որը տարամեկնաբանությունների տեղիք էր տալիս: Հստակ նշվել են նաև շորթման կատարման եղանակները՝ 1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիք, 2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիք, 3) շանտաժ (շանտաժի հասկացությունը տրված է քրեական օրենսգրքի հոդված 3-ով, որի 13-րդ կետը սահմանում է՝ «շանտաժ՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին կամ օրինական շահերին վնաս

¹¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, էջ 89:
¹² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, էջ 41:

պատճառող կամ անձի համար անցանկալի տեղեկություններ հրապարակելու կամ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիքը»), 4) հարկադրանքի այլ եղանակ¹³:

Այսպիսով, ընդլայնվել է նաև շորթման ժամանակ պահանջին ուղեկցվող սպառնալիքի բովանդակությունը: Նախ՝ ընդլայնվել է այն սուբյեկտների շրջանակը, որոնց նկատմամբ կարող է սպառնալիք կիրառվել՝ դրանց շարքում ընդգրկելով ոչ միայն անձին, նրա մերձավորին, այլև մերձավոր ազգականին, անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողին, ինչը ողջունելի է և շորթման հանցակազմի առավել համընդգրկուն կարգավորում է իրենից ներկայացնում: Բացի այդ, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքից զատ, արդարացիորեն նախատեսվել է նաև գույքը վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքը:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ նախկին քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածում օգտագործվում էր անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու սպառնալիք արտահայտությունը, որը պրակտիկայում թյուրըմբռնման տեղիք էր տալիս: Մասնավորապես, միանշանակ չէր՝ արդյոք շորթման հանցակազմն առկա էր բոլոր այն դեպքերում, երբ անձը սպառնում էր այնպիսի տեղեկություններ հրապարակել, որոնք վերաբերում էին տուժողի ոչ օրինական շահերին, օրինակ՝ նրա կողմից հանցանք կամ այլ հակաիրավական արարք կատարելու վերաբերյալ տեղեկությունների հրապարակմանը: Օրենքի տառացի մեկնաբանման դեպքում ստացվում էր, որ նման դեպքերում շորթումը բացակայում էր: Այս առումով, ճիշտ մոտեցում է դրսևորվել նոր քրեական օրենսգրքում, որտեղ ընդլայնվել է շանտաժի բովանդակությունը կազմող արարքները՝ դրանց մեջ ներառելով նաև անձի համար անցանկալի տեղեկություններ հրապարակելու սպառնալիքը:

Ըստ էության՝ նշված եղանակներից ամբողջությամբ նորույթ է միայն վերջին՝ 4-րդ կետը: Ընդհանուր առմամբ նոր քրեական օրենսգրքի ողջունելի նորամուծություններից է նաև այն, որ շորթման եղանակների սպառնիչ ցանկ չի սահմանվել, քանի որ օբյեկտիվ իրականության մեջ շորթման ժամանակ տրվող սպառնալիքը կարող է տարաբնույթ լինել, ուստի ճիշտ չէ այն սպառնիչ կերպով թվարկելը, ինչպես որ արվել էր նախկին քրեական օրենսգրքում:

ԳԼՈՒԽ 2. ՇՈՐԹՄԱՆ ՀԱՆՑԱԿԱԿԱԶՄԻ ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 2.1 Շորթման հանցակազմի ծանրացնող հանգամանքների որակման հիմնահարցերը

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է շորթման հանցակազմի հետևյալ ծանրացնող հանգամանքները, որոնք են՝ շորթումը, որը կատարվել է՝ 1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ ան-

¹³ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՕ-199-Ն, էջ 89:

ձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելով, 2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ, 3) ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ, 4) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ, 5) անչափահասի նկատմամբ, 6) արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի նկատմամբ, 7) ժամկետային զինծառայողի նկատմամբ, 8) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, 9) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ 10) խոշոր չափերով¹⁴:

Հարկ ենք համարում անդրադառնալ քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներից մի քանիսին, որոնք կարող են խնդրահարույց լինել իրավակիրառ պրակտիկայում: Անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելով շորթման վերաբերյալ քրեական իրավունքի տեսության մեջ առկա են տարբեր մեկնաբանություններ: Գ. Կրիգերը, քննարկման առարկա դարձնելով շորթման քննարկվող ծանրացնող հանգամանքը, նշել է. «Շորթման հանցակազմի պարագայում «բռնություն» հասկացության տակ նկատի է ունեցվում այնպիսի բռնությունը, որը չի առաջացնում առողջության կարճատև քայքայում կամ աշխատունակության կորուստ, այլ այդ հասկացությունն ընդգրկում է միայն ծեծը կամ ֆիզիկական ցավ պատճառելը: Բռնության այս հասկացության մեջ կարող են ներառվել նաև ազատությունից զրկելը, տուժողի կամ նրա մերձավորների առևանգումը, եթե այդ դեպքում վտանգ չի ստեղծվել նրանց կյանքի կամ առողջության համար»¹⁵:

ՀՀ Վճռաբեկ դատարանի բնորոշմամբ՝ բռնությունը բնութագրվում է որպես դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը սահմանել է նաև կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության հասկացությունը, որի համաձայն՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն է համարվում այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ուղղված են անձի առողջությանը ցանկացած ծանրության (թեթև, միջին կամ ծանր) վնաս պատճառելուն կամ սպանելուն¹⁶: Անհրաժեշտ է նշել, որ, օրինակ, Գերմանիայում, Լեհաստանում, Իսպանիայում, Դանիայում բռնության փաստացի գործադրումը դրա գործա-

¹⁴ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, էջ 89:
¹⁵ Տե՛ս Крйгер Г. Л., Ответственность за разбой, М.: Юрид. Ли., 1968, էջ 105:
¹⁶ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԱԲԴ/0038/01/13 որոշումը:

դրման սպառնալիքի հետ միասին կամ առանց դրա մտնում է շորթման հասարակ հանցակազմի մեջ, որպիսի մոտեցումը, գտնում ենք, արդարացի չէ: Հարկ է նկատել, որ քննարկվող ծանրացնող հանգամանքով նախատեսված բռնության գործադրման զոհ կարող են հանդիսանալ ինչպես շորթման տուժողը, այնպես էլ նրա մերձավորները: Մերձավորներ բառն օգտագործելով՝ օրենսդիրն էականորեն ընդլայնել է քննարկվող նորմի կիրառման շրջանակները: Տուժողի «մերձավորներ» ասելով՝ տվյալ դեպքում հասկացվում են ինչպես նրա մերձավոր ազգականները, որոնց ցանկն օրենսդրական հիմք ունի (ծնողները, երեխաները, որդեգրողները, որդեգրվածները, պապերը, տատերը, թոռները, եղբայրները, քույրերը, ամուսինները), այնպես էլ այլ անձինք, որոնց շահերը թանկ են տուժողի համար, որոնց մասին հոգ տանելը մարդու կարևորագույն հոգևոր պահանջ-մունքներից է: Վերջիններիս թվին կարող են դասվել այլ ազգականները, փեսացուն, հարսնացուն, ընկերները և այլն: Ինչ վերաբերում է արատավորող տեղեկությունների փաստացի հրապարակմանը, որոնք ունեն վիրավորական կամ զրպարտիչ բնույթ, ապա, ինչպես գիտենք, համապատասխան հոդվածները, որոնք պատասխանատվություն էին նախատեսում վիրավորանքի կամ զրպարտության համար, ապաքրեականացվել են, և այդ դեպքում արարքը չի կարող որակվել հանցագործությունների համակցությամբ: Եթե օրենսդիրը մասով նախատեսում է կոնկրետ գործողությունների կատարման սպառնալիքը, ապա պետք է նախատեսի այդ գործողությունների փաստացի կատարումը՝ որպես ծանրացնող հանգամանք: Այսպիսով, քանի որ առկա են բազմաթիվ կարծիքներ բռնության հասկացության հետ կապված, փորձելով ընդհանրացնել նշված դիրքորոշումները՝ կարծում ենք, որ բռնությունը պետք է բնութագրվի որպես դիտավորությամբ անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք:

Շորթման հաջորդ ծանրացնող հանգամանքը այն մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելն է: Խմբի կողմից կատարվող հանցավոր ոտնձգությունն ունի անչափ բարձր հանրային վտանգավորություն: Խմբի յուրաքանչյուր անդամի վարքագիծն ամրապնդում է մյուս անդամների հանցավոր գործողություններ կատարելու կամքը, այսինքն՝ հանցավոր ոտնձգության ուժը կրկնապատկվում, եռապատկվում է, ուստի, տուժողի՝ դիմադրություն ցույց տալու հնարավորությունն էապես սահմանափակվում է¹⁷: Ներկայացված դիտարկումների հիման վրա հարկ է արձանագրել, որ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ շորթման կատարման մասին կարելի է խոսել,

¹⁷ Стів Чечель Г. И., Криминальные группировки // Криминальное насилие и жестокость. М., 1995, էջ 21-22:

եթե առկա է համակատարում, այսինքն՝ երկու կամ ավելի անձինք անմիջակա-
նորեն մասնակցում են շորթման օբյեկտիվ կողմը հանդիսացող գործողություն-
ների կատարմանը, մի կատարողի գործողությունները լրացնում են մյուսի կամ
մյուսների գործողությունները, ինչը թույլ է տալիս, միավորելով ջանքերը, հաս-
նել իրենց համար ցանկալի արդյունքին: Որպես համակատարողներ հանդես են
գալիս 14 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձինք, համակատարողնե-
րի միջև նախնական համաձայնությունը ձեռք է բերվել մինչև շորթման օբյեկտիվ
կողմի սկսելը, համակատարողներից մեկը կամ մի քանիսը տուժողի կամ նրա
մերձավորի նկատմամբ սպառնալիքների գործադրմանն ուղղված արարքներ են
կատարում, մասնավորապես՝ գործադրում են բռնություն կամ կատարում այլ՝
ինքնուրույն որակման ենթակա գործողություններ՝ ուղղված սպառնալիքի ամ-
րապնդմանը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ շորթումը՝ որպես հանցա-
վոր արարք, ավարտված է համարվում սպառնալիքով զուգորդված պահանջ
ներկայացնելու պահից՝ նշենք, որ շորթումը, որը կատարվել է խոշոր չափերով,
ծանրացնող հանգամանքն առկա կլինի, երբ հանցավորը տուժողին ներկայացնի
խոշոր չափերով գույք հանձնելու պահանջ:

Ինչ վերաբերում է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ
դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելուն, ապա հարկ է նշել,
որ անձի կողմից նշված լիազորություններն ու ազդեցությունն օգտագործելով՝
հանցավոր արարքի կատարումը ևս էապես բարձրացնում է արարքի հանրային
վտանգավորության մակարդակը: Նման լիազորություններ ունենալը խոսում է
որոշակի կարգավիճակի մասին, ինչով պայմանավորված, անձը հասարակության
աչքերում այլոց համեմատ կարող է ունենալ ավելի մեծ հնարավորություններ:
Հասարակության լայն շերտերի նման ընկալման պայմաններում տուժողը շատ
դեպքերում հետագա խնդիրներից խուսափելու համար կատարում է հանցավո-
րի պահանջները:

Հարկ ենք համարում անդրադարձ կատարել նաև շորթման հանցակազմի
այնպիսի ծանրացնող հանգամանքի առկայության նպատակահարմարությանը,
ինչպիսին է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ
շորթման կատարումը: Հանցավորի մոտ զենքի առկայությունն, ինքնին, էապես
մեծացնում է վերջինիս հանրային վտանգավորությունը, քանի որ տվյալ պայման-
ներում հնարավոր չէ բացառել զենքի գործադրման իրական հնարավորությունը:
Բացի այդ, հանցավորի մոտ զենքի առկայության պայմաններում տուժողի հնա-
րավոր վարքագծի ընտրության սահմանները նեղանում են, ընդհուպ զրոյանում
են, քանի որ տուժողը, քաջ գիտակցելով զենքի գործադրման հնարավորությու-
նը, ականջալուր է լինում հանցավորի պահանջներին: Ակներև է, որ այս արարքն
ունի առավել բարձր հանրային վտանգավորություն, քան շորթման հասարակ
հանցակազմը: Հատկանշական է, որ մեր կողմից ուսումնասիրված երկրներից
շատերում զենքի գործադրմամբ շորթման կատարումը համարվում է ծանրաց-

նող հանգամանքներում կատարված: Հիմք ընդունելով նշվածը՝ գտնում ենք, որ շորթման տարբեր դրսևորումների համար դիֆերենցացված պատասխանատվություն սահմանելու տեսանկյունից անչափ կարևոր է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ շորթման կատարումը նախատեսել որպես շորթման հանցակազմի ծանրացնող հանգամանք, ինչն, անշուշտ, կապահովի պատժի չափի որոշման հարցում արդարացված տարբերակված մոտեցումը անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել նաև, որ որպես շորթման ծանրացնող հանգամանք՝ կարելի է նախատեսել նաև «Պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա պահանջելով» կատարելը: Քանի որ նոր քրեական օրենսգրքում որպես հափշտակության ինքնուրույն տեսակ նախատեսված չէ նախկին քրեական օրենսգրքի հոդված 180-ով նախատեսված «Առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելու» հանցակազմը, այն որպես ծանրացնող հանգամանք նախատեսվել է մի շարք հափշտակության եղանակների պարագայում, և ավելորդ չէր լինի այն նախատեսելը նաև շորթման հանցակազմի ծանրացնող հանգամանքներում, քանզի գործնականում հնարավոր են դեպքեր, երբ հանցավորը շորթմամբ պահանջի այնպիսի գույք, որը իրենից պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք է ներկայացնում, ինչը, ակնհայտորեն, օժտված է բարձր վտանգավորությամբ: Ուստի, մեր համոզմամբ, պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ներկայացնող առարկայի շորթումը պետք է նախատեսվի որպես առավել ծանրացնող հանգամանք, ինչպես որ դա կարգավորվել է հափշտակության բոլոր եղանակների դեպքում:

Անդրադառնալով շորթման առավել ծանրացնող հանգամանքներին՝ նշենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածը սահմանում է շորթման առավել ծանրացնող հանգամանքները: Մասնավորապես, շորթումը, որը կատարվել է՝ 1) հանցավոր կազմակերպության կողմից, 2) անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելով կամ 3) առանձնապես խոշոր չափերով¹⁸:

Հարկ ենք գտնում անդրադառնալ, մասնավորապես, հանցավոր կազմակերպության կողմից շորթմանը: Այսպես, շորթումը հանցավոր կազմակերպության կողմից կատարելու մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ մի խումբ անձինք միավորվել են շորթման կատարման համար կամ նաև այլ հանցագործությունների կատարման համար, և շորթման կատարումը ընդգրկված է եղել կազմակերպության բոլոր անդամների դիտավորության մեջ: Այսինքն՝ անձը պետք է գիտակցի, որ կազմում է կազմակերպության մասնիկը, որը միավորվել է շորթում կատարելու նպատակով, իր գործողություններով լրացնի խմբի մյուս անդամների գործողությունները՝ խմբի համար ցանկալի արդյունքին հասնելու համար:

¹⁸ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, էջ 89:

§ 2.2 Ծորթման հանցակազմի՝ այլ հարակից հանցագործություններից սահմանազատման հիմնախնդիրները

Ծորթումը հաճախ շփոթում են այնպիսի հանցագործությունների հետ, ինչպիսիք են՝ ավազակությունը, ինքնիրավությունը և այլն¹⁹: Մասնավորապես, շորթումը պետք է տարբերել ավազակությունից: Ավազակության դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը գործադրվում են որպես գույքը վերցնելու կամ այն պահելու միջոց, մինչդեռ շորթման ժամանակ բռնությունը կամ դրա սպառնալիքը հանդիսանում են տուժողի կամքի վրա ճնշման միջոց: Քանի որ շորթման օբյեկտիվ կողմը կարող է իրականացվել բռնության գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով, շորթման հասկացությունը նմանվում է ավազակության հասկացությանը, ուստի իրավակիրատ պրակտիկայում ամենաահանախը առաջանում են շորթման և ավազակության սահմանազատման հետ կապված հարցերը: Ծորթման և ավազակության ժամանակ կարող են առկա լինել այնպիսի միանման հատկանիշներ, ինչպիսիք են գույքը հանձնելու պահանջը, բռնության գործադրումը կամ դրա գործադրման սպառնալիքը: Քննարկվող երկու հանցագործությունների սահմանազատման համար հարկ է քննարկման առարկա դարձնել երկու հանցակազմերի դիսպոզիցիայում հանդիպող «սպառնալիք» հասկացությունը: Ավազակության դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը գործադրվում է որպես գույքը վերցնելու կամ այն պահելու միջոց, մինչդեռ շորթման ժամանակ բռնությունը կամ դրա սպառնալիքը տուժողի կամքի վրա ներգործելու, այն ճնշելու միջոց է:

Ավազակության ժամանակ գույքին տիրանալը տեղի է ունենում բռնության գործադրման կամ դրա գործադրման սպառնալիքի հետ միաժամանակ կամ դրա գործադրումից անմիջապես հետո, իսկ շորթման դեպքում հանցավորը ցանկանում է գույքը ստանալ հետագայում: Ավելին՝ շորթման ժամանակ, ի տարբերություն ավազակության, սպառնալիքը կարող է լինել անգամ քողարկված, սակայն բոլոր դեպքերում տուժողին պետք է հասկանալի լինի դրա իմաստը, և տուժողն ընկալի դրա իրականացման անխուսափելիությունը: Ավազակության ժամանակ հանցավորը գույքը վերցնում է դրա օրինական տիրապետողի կամքին հակառակ, իսկ շորթման դեպքում տուժողն ինքն է գույքը հանձնում հանցավորին, չնայած դա անում է հարկադրված՝ սպառնալիքի կամ բռնության ազդեցության տակ, սակայն այնուամենայնիվ պետք է նշել, որ հնարավոր են դեպքեր, որ ավազակության դեպքում էլ տուժողը ինքը հանձնի գույքը, ուստի հիմնական տարբերությունը գույքը հանձնելու պահի մեջ է. ավազակության դեպքում պահանջում է գույքը հանձնել հենց այդ պահին, իսկ շորթման դեպքում՝ սպազայում:

Ավազակության դեպքում հանցավորի դիտավորությունն ուղղված է տուժողի մոտ գտնվող գույքի անհապաղ հափշտակմանը, մինչդեռ շորթման դեպքում հանցավորը ցանկանում է տուժողից գույքը ստանալ սպազայում: Եթե շորթողի պա-

¹⁹ Ст'ю Скуратов Ю. И., Судебная практика по уголовным делам: учеб. пособие, М.: Норма, 2001, էջ 632:

հանջը չի կատարվում, և հանցավորը, մերժում ստանալով, անմիջապես բռնություն է գործադրում ու վերցնում գույքը, ապա շորթումը վերանում է ավագակության, և կատարվածը հանցագործությունների համակցությամբ որակելու անհրաժեշտություն չկա: Սակայն, այն դեպքում, երբ շորթողի պահանջը չի կատարվում, և որոշ ժամանակ անց նա բռնությամբ կամ դրա սպառնալիքով վերցնում է ուրիշի գույքը, ապա այդ դեպքում ևս հանցավորի գործողությունները պետք է որակվեն համակցությամբ՝ շորթում և ավագակություն²⁰:

Ընդհանրացնելով վերոնշյալը և նկատի ունենալով, որ ավագակության և բռնությամբ կամ դրա սպառնալիքով գուցորդված շորթման հանցակազմերը իրենց էությամբ շատ մոտ են, ինչը գործնականում դրանց որակման հարցում բազում խնդիրներ է առաջացնում՝ կարծում ենք, որ շորթման օրենսդրական բնորոշման մեջ պետք է սահմանվեն շորթման այն էական հատկանիշները, որոնք պայմանավորում են դրա տարբերակումը ավագակությունից: Ինչպես արդեն նշեցինք, դրանց տարբերակման հիմնական ցուցիչը հանցավորի պահանջների կատարման ժամանակային պահն է. մասնավորապես՝ եթե ավագակության դեպքում հանցավորը բռնության կամ սպառնալիքի գործադրմամբ հենց այդ պահին հափշտակում է տուժողի գույքը, ապա շորթման դեպքում գույքը հանձնելու պահանջն ուղղված է ապագային, ուստի, կարծում ենք, որ այդ հանգամանքը պետք է օրենսդրական ամրագրում ստանա: Ուստի առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպել հետևյալ կերպ. «Շորթումը՝ անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին ապագայում հանձնելու կամ հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջը, որը ...»:

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ որոշակի դժվարություններ են առաջանում շորթման և ինքնիրավչության հանցակազմերի սահմանազատման հարցում: Ինքնիրավչության անմիջական օբյեկտը հանդիսանում է քաղաքացիների կողմից իրենց իրավունքների և ազատությունների իրականացման սահմանված կարգը, իսկ լրացուցիչ օբյեկտ է հանդիսանում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքներն ու օրինական շահերն ապահովող հասարակական հարաբերությունները²¹:

Օրենքում ինքնիրավչությունը բնորոշվում է որպես օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքն ինքնակամ իրականացնելը, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

²⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս, Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 412:

²¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 908:

Շորթման հիմնական օբյեկտը, ինչպես նշվել է, սեփականության իրավունքն ապահովող հասարակական հարաբերություններն են, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդիսանալ անձի պատիվն ու արժանապատվությունը, անձի անձնական կյանքի անձեռնմխելիությունը, առողջությունն ապահովող հասարակական հարաբերությունները: Ի տարբերություն ինքնիրավւթյան՝ շորթման համար պատասխանատվություն նախատեսող հողվածի դիսպոզիցիայում թվարկվում է հանցագործության առարկան և, ելնելով դրա սահմանումից, հարկ է արձանագրել, որ շորթումը հնարավոր է միայն ուրիշի գույքի նկատմամբ: Այսինքն՝ այնպիսի գույքի նկատմամբ, որի հետ կապված ոսնձգողը չունի ո՛չ իրական, ո՛չ էլ ենթադրյալ իրավունքներ: Իրական իրավունքի տակ հասկացվում են այնպիսի իրավունքներ, որոնք անձին են պատկանում օրինական հիմունքներով: Այս դեպքում ինքնիրավւթյան գործողությունները առկա կլինեն այն ժամանակ, երբ հանցավորը խախտում է իրեն պատկանող իրավունքի իրականացման կարգը: Ենթադրյալ իրավունքի տակ հարկ է հասկանալ այնպիսի իրավունքներ, որոնք իրականում անձին չեն պատկանում, սակայն վերջինս սխալմամբ կարծում է, որ օժտված է նման իրավունքով: Քննարկվող հանցագործությունների տարբերակման մյուս հատկանիշները ոսնձգության օբյեկտիվ կողմի բնութագրիչներն են: Շորթման օբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն ակտիվ գործողություններով, որոնք ստիպում են տուժողին կատարել հանցավորի գույքային պահանջները: ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված է, որ հանցավորն ինքնակամ իրականացնում է իր իրական կամ ենթադրյալ իրավունքները: Սակայն, մեր կարծիքով, որոշ դեպքերում ինքնիրավւթյունը կարող է իրականացվել նաև անգործությամբ, մասնավորապես, երբ անձը պարտավոր է գործել իրավական ակտի, պայմանագրի համաձայն, բայց հրաժարվում է իրականացնել իր պարտականությունները: Այս հարցի վերաբերյալ գրականության մեջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Հեղինակների մեծ մասը կարծում է, որ ինքնիրավւթյունը կարող է կատարվել միայն գործողությամբ: Այսպես, Ն. Գ. Իվանովի կարծիքով ինքնիրավւթյան օբյեկտիվ կողմը կարող է իրականացվել միայն գործողությամբ: Այնպիսի արարքներ, ինչպիսիք են, օրինակ, դատական որոշումները չկատարելը, ինքնիրավւթյուն չեն հանդիսանում²²:

Սակայն գոյություն ունեն նաև այլ կարծիքներ: Մասնավորապես, Ա. Կլադկովը գրում է. «Ինքնիրավւթյունը կարող է իրականացվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Օրինակ՝ անձը, երբ պահում է, չի հանձնում, այդ թվում նաև պետական մարմիններին, վիճարկվող գույքը, ինչի արդյունքում սեփականատերը կրում է էական նյութական վնաս»²³: Ի տարբերություն շորթման՝ ինքնիրավւթյունը ենթադրում է, որ այս կամ այն գործողության իրավաչափությունը պետք է վիճարկվի քաղաքացիների կամ կազմակերպությունների

²² Стіи Российское уголовное право: В 2-х п. Т. 2. Особенная часть / под. ред. проф. А. И. Парога. М.: Профобразование, 2001, էջ 792:

²³ Стіи Уголовное право России. Особенная часть: Учебник / Отв. ред. проф. Б. В. Здравомыслов. М.: Юрист, 1996, էջ 496.

կողմից: Ընդ որում՝ այն կարող է վիճարկվել ոչ միայն դատարանում կամ վարչական մարմնում, այլև դրանցից դուրս: Շորթման դեպքում պահանջը ուղղված է ուրիշի գույքին, այդ պատճառով նման դեպքերում չի կարելի խոսել կողմերի իրական կամ ենթադրյալ իրավունքների երկկողմանիության մասին, քանի որ այս կամ այն գույքի նկատմամբ բացառիկ իրավունքները պատկանում են միայն տուժողին: Սպառնալիքը՝ որպես ինքնիրավչության օբյեկտիվ կողմի հատկանիշ, ի տարբերություն շորթման, սահմանափակվում է միայն տուժողի մարմնական անձեռնմխելիությունը խախտելով: Պետք է նշել նաև, որ ինքնիրավչության դեպքում բռնությունը հանդիսանում է իր իրական կամ ենթադրյալ իրավունքները իրականացնելու միջոց, իսկ շորթման դեպքում՝ հանցավորի անօրինական պահանջները իրագործելու միջոց: Ինքնիրավչությունը նկարագրված է նյութական հանցակազմով և ավարտված է համարվում հետևանքների առաջացման պահից, մինչդեռ շորթումը նկարագրված է ձևական հանցակազմով. ավարտված է համարվում հանցավորի կողմից պահանջ ներկայացնելու պահից՝ անկախ հանրորեն վտանգավոր հետևանքներից: Սույն հանցագործությունները տարբերվում են միմյանցից նաև սուբյեկտիվ կողմով: Շորթումն իր էությանը հանդիսանում է շահադիտական-բռնի հանցագործություն, որը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Շորթողը ցանկանում է տուժողից կամ նրա մերձավորից գույք, գույքային օգուտ ստանալ, գիտակցում է, որ այդ գույքի նկատմամբ չունի ո՛չ իրական, ո՛չ էլ ենթադրյալ իրավունքներ: Նա ցանկանում է ապօրինի հարստանալ ուրիշի հաշվին: Ինքնիրավչության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

ՀՀ նախկին քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն էր նախատեսում կաշառքի շորթման համար: Այդ առումով մասնագիտական գրականության մեջ ընդհանուր ճանաչում է ստացել այն մոտեցումը, որ կաշառք ստանալը շորթմամբ առկա է այն ժամանակ, երբ պաշտոնատար անձը պահանջում է անձից կաշառք տալ իրեն՝ հակառակ դեպքում սպառնալով ոտնահարել նրա իրավունքները կամ օրենքով պաշտպանվող շահերը, կամ էլ, թեև ուղղակիորեն չի պահանջում կաշառք տալ, բայց անձին այնպիսի պայմանների մեջ է դնում, որ վերջինս հարկադրված կաշառք է տալիս իր իրավունքներին և օրենքով պաշտպանվող շահերին սպառնացող հնարավոր վտանգը կանխելու համար²⁴: Կաշառքի շորթման հարցին անդրադարձել է նաև ՌԴ Գերագույն Դատարանի Պլենումն իր 2000 թ. փետրվարի 10-ի N 6 որոշման 15-րդ կետով: Ըստ այդ որոշման՝ շորթում նշանակում է պաշտոնատար անձի կաշառք տալու պահանջը՝ փողի, արժեթղթերի և այլ գույքի տեսքով, այնպիսի գործողություններ իրականացնելու սպառնալիքի տակ, որոնք կարող են վնաս պատճառել քաղաքացիների օրինական շահերին կամ նրանց դնել այնպիսի պայմաններում, որոնց

²⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 844

դեպքում նա ստիպված կլինի կաշառք տալ՝ իր՝ օրենքով պաշտպանվող շահերին սպառնացող վտանգավոր հե-տևանքները կանխելու նպատակով²⁵: Բ. Վոլժեն-կինը արտահայտել է այն դիրքորոշումը, որ համապատասխան նորմի մանրա-կրկիտ վերլուծությունը ապացուցում է Գերագույն Դատարանի դիրքորոշման ճշմարտացիությունը: Կաշառքի շորթման համար օրենսդրի կողմից խստացված պատասխանատվություն է նախատեսված այն պատճառով, որ շորթման դեպ-քում տուժում են քաղաքացիների օրինական շահերը: Եթե խոսքը գնար քաղա-քացիների այնպիսի շահերի մասին, որոնք չեն պաշտպանվում օրենքով, պատասխանատվությունը չէր խստացվի²⁶: Կաշառքի շորթման և շորթման հան-ցակազմերը միմյանցից տարբերակվում են նաև հանցագործության սուբյեկտով: Կաշառքի շորթման սուբյեկտը հատուկ է, որպես այդպիսին կարող է հանդես գալ միայն պաշտոնատար անձը: Այս երկու հանցակազմերը միմյանցից կարող են տարբերվել նաև հանցագործության առարկայով, քանի որ կաշառքի շորթման դեպքում հանցագործության առարկան ավելի լայն է սահմանված (որևէ այլ առա-վելություն ստանալը): Տարբերիչ հատկանիշ է նաև այն, որ կաշառքի շորթումը կատարվում է պաշտոնատար անձի ծառայողական գործունեության հետ կապ-ված, իսկ հասարակ շորթումը կապված չէ այդպիսի գործունեության հետ:

Եզրակացություն

Անփոփելիվ սույն աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասի-րություններն ու հետազոտությունները՝ կատարել ենք մի շարք եզրահանգում-ներ ու առաջարկություններ, որոնք ներկայացված են ստորև.

«Չ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով, ի համեմատ նախկին օրենսդրու-թյամբ առկա կարգավորումների, ընդլայնվել է շորթման ժամանակ պահանջն ուղեկցվող սպառնալիքի բովանդակությունը: Ընդլայնվել է այն սուբյեկտների շրջանակը, որոնց նկատմամբ կարող է սպառնալիք կիրառվել՝ դրանց շարքում ընդգրկելով ոչ միայն անձին, նրա մերձավորին, այլև մերձավոր ազգականին, ան-ձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողին, ինչը ողջու-նելի է և շորթման հանցակազմի առավել համընդգրկուն կարգավորում է իրենից ներկայացնում: Բացի այդ, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքից զատ, արդարացիորեն նախատեսվել է նաև գույքը վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքը:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ նախկին քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածում օգտագործվում էր անձի կամ նրա մերձավորի իրավունքնե-

²⁵ Ст'и Постановление Пленума Верховного Суда РФ № 6 от 10.02.2000 г. «О судебной практике по делам о взяточничестве и коммерческом подкупе» // Сборник постановлений Пленумов Верховного Суда РФ по уголовным делам. М., 2003, էջ 214:

²⁶ Ст'и Волженкин Б.В., Служебные преступления: Комментарий законодательства и судебной практики, СПб.: Юридический центр Пресс, 2005, էջ 560:

րին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու սպառնալիք արտահայտությունը, որը պրակտիկայում թյուրըմբռնման տեղիք էր տալիս:

Ընդհանուր առմամբ, քրեական օրենսգրքի ողջունելի նորամուծություններից է նաև այն, որ շորթման եղանակների սպառիչ ցանկ չի սահմանվել, քանի որ օբյեկտիվ իրականության մեջ շորթման ժամանակ տրվող սպառնալիքը կարող է տարաբնույթ լինել, ուստի ճիշտ չէ այն սպառիչ կերպով թվարկելը, ինչպես որ արվել էր նախկին քրեական օրենսգրքում:

Նկատի ունենալով, որ ավագակության և բռնությամբ կամ դրա սպառնալիքով գուգորդված շորթման հանցակազմերն իրենց էությամբ շատ մոտ են, ինչը գործնականում դրանց որակման հարցում բազում խնդիրներ է առաջացնում՝ կարծում ենք, որ շորթման օրենսդրական բնորոշման մեջ պետք է սահմանվեն շորթման այն էական հատկանիշները, որոնք պայմանավորում են դրա տարբերակումը ավագակությունից: Ուստի, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպել հետևյալ կերպ. «Շորթումը՝ անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին սպազայում հանձնելու կամ հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջը, որը ...»:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ որպես շորթման ծանրացնող հանգամանք՝ կարելի է նախատեսել նաև «Պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա պահանջելով» կատարելը: Քանի որ նոր քրեական օրենսգրքում որպես հափշտակության ինքնուրույն տեսակ նախատեսված չէ նախկին քրեական օրենսգրքի հոդված 180-ով նախատեսված «Առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելու» հանցակազմը, այն որպես ծանրացնող հանգամանք նախատեսվել է մի շարք հափշտակության եղանակների պարագայում, և ավելորդ չէր լինի այն նախատեսելը նաև շորթման հանցակազմի ծանրացնող հանգամանքներում, քանզի գործնականում հնարավոր են դեպքեր, երբ հանցավորը շորթմամբ պահանջի այնպիսի գույք, որը իրենից պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք է ներկայացնում, ինչը, ակնհայտորեն, օժտված է բարձր վտանգավորությամբ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն:
The Constitution of the Republic of Armenia.
2. ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն:
Criminal Code of the Republic of Armenia, HO-199-N.
3. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ.:
“A guide to the interpretation of conceptual approaches and new institutions in the new RA Criminal Code”, Council of Europe, July, 2022.
4. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս, Եր.: ԵՊՀ հրատ., 2012:
“Criminal Law of the Republic of Armenia. Special Part”, Yerevan, YSU, 2012.
5. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239:
Civil Code of the Republic of Armenia, HO-239
6. ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԱԲԴ/0038/01/13 որոշում
ԱԲԴ/0038/01/13 Decision of the Court of Cassation of RA, December 16, 2014.
7. Абросимов С., Проблемы ответственности за вымогательство /Законность. 1999. № 5.
Abrosimov S. “Problems of Liability for Extortion”/ Legality/ 1999. № 5.
8. Волженкин Б.В., Служебные преступления: Комментарий законодательства и судебной практики, СПб.: Юридический центр Пресс, 2005.
Volzhenkin B.V. Service Crimes: “Commentary of Legislation and Judicial Practice”. SPb.: Legal Center Press, 2005.
9. Елисеев С.А. Преступления против собственности по уголовному законодательству России. ISBN: 978-5-94552-180-3 Томск, 1999.
Eliseev S.A. Crimes against Property according to the Criminal Legislation of Russia, ISBN:978-5-94552-180-3, Tomsk, 1999.
10. Кригер Г. Л., Ответственность за разбой, М./Юрид. Лит, 1968.
Krieger G. L., “Liability for Robbery” Moscow, /Yurid. lit./, 1968.
11. Корягина О.В., Уголовно-правовая и криминологическая характеристика вымогательства, 1998.
Koryagina O.V. Criminal Law and Criminological Characteristics of Extortion, 1998.
12. Постановление Пленума Верховного Суда РФ «О судебной практике по делам вымогательства» от 4 мая 1990 г. (с изм. от 25.10.1996 г.) / Сборник постановлений Пленумов Верховного Суда Российской Федерации по уголовным делам. М., 2003.

Resolution of the Plenum of the Supreme Court of the Russian Federation “On Judicial Practice in Cases of Extortion” of May 4, 1990 (as amended on 25.10.1996) / Collection of resolutions of the Plenums of the Supreme Court of the Russian Federation on criminal cases. Moscow, 2003.

13. Постановление Пленума Верховного Суда РФ № 6 от 10.02.2000 г. «О судебной практике по делам о взяточничестве и коммерческом подкупе» /Сборник постановлений Пленумов Верховного Суда РФ по уголовным делам. М., 2003.

Resolution of the Plenum of the Supreme Court of the Russian Federation No. 6 of 10.02.2000 “On Judicial Practice in Cases of Bribery and Commercial Bribery” / Collection of resolutions of the Plenums of the Supreme Court of the Russian Federation on criminal cases, M, 2003.

14. Рыжкова И.Д. Вымогательство: теоретико-правовой анализ и криминологическая характеристика, 2008.

Ryzhkova I.D. “Extortion: theoretical and legal analysis and criminological characteristics”, 2008.

15. Российское уголовное право: В 2-х п. Т.2. Особенная часть/ под. ред. проф. А.И. Рарога. М.: Профобразование, 2001.

“Russian Criminal Law: In 2 p. Vol. 2. Special part / edited by Prof. A.I. Rarog. M./Profobrozovanie/ 2001.

16. Скуратов Ю. И., Судебная практика по уголовным делам: учеб. пособие, М.: Норма, 2001.

Skuratov Y. I., “Judicial Practice in Criminal Cases: Textbook” Moscow: /Norma/ 2001.

17. Уголовное право России. Особенная часть: Учебник/ Отв. ред. проф. Б. В. Здравомыслов. М.: Юристъ, 1996.

Criminal Law of Russia. Special Part: Textbook” / Edited by Prof. B. V. Zdravomyslov. Moscow: Yurist, 1996.

18. Чечель Г. И., Криминальные группировки // Криминальное насилие и жестокость. М., 1995.

Chechel G. I., Criminal gangs // Criminal Violence and Cruelty, Moscow, 1995.

Milena Arustamyan

Prosecutor of the Prosecutor's Office of Lori region

CRIMINAL-LAW CHARACTERISTICS OF EXTORTION¹

Abstract

In the context of criminal-law reforms, which are currently being implemented in the Republic of Armenia, the study of the crime of extortion and identification of problems in this sphere are of great importance. As a result of judicial reforms in the Republic of Armenia, recently, a number of new legal codes have been developed, including the new Criminal Code of the Republic of Armenia, which entered into force on July 1, 2022. According to the currently effective Criminal Code, certain changes have been made in the area of criminal defence of crimes against property, economy and economic activity, including the extortion criminal offence. Therefore, the study of criminal-law key issues of extortion criminal offence is of great visual and practical importance. However, in addition to the abovementioned, it should be added that extortion has always hindered the activities of both legal entities with any form of organizational law and individuals.

The aim of the study is to analyze the criminal law content of the crime of extortion, to identify the existing problems in the area under consideration, as well as to introduce the criminal law characteristic of the crime of extortion defined under the current Criminal Code of the Republic of Armenia. Extortion remains a high-level latency crime. Many of the victims of extortion do not address law-enforcement agencies, considering this method of defence as ineffective. The high level of latency does not allow evaluation of the true prevalence of this type of crime.

Within the framework of this article, the criminal-law characteristics of crimes against property are studied and presented, and the peculiarities of the concept of extortion are considered.

The corpus delicti of extortion is analyzed, and its aggravating circumstances are considered; proposals are made to introduce corresponding amendments to the legislation for a more precise definition of the article providing for criminal liability for extortion and the easiest possible definition of similar acts in practice.

Keywords: extortion; blackmail; threat; theft; property; law; crime; victim; demand

¹ The article was presented on 01.09.2023 and was reviewed on 09.11.2023.

Милена Арустамян

Прокурор прокуратуры Лорийской области

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА ВЫМОГАТЕЛЬСТВА¹

Абстракт

В контексте реформ уголовно-правовой сферы, реализуемых в настоящее время в Республике Армения, изучение преступления вымогательства и освещение проблем в этой сфере имеют большое значение. В результате судебных реформ в Республике Армения за последние годы был разработан ряд новых кодексов, в том числе новый Уголовный кодекс Республики Армения, вступивший в силу 1 июля 2022 года. В действующий Уголовный кодекс внесены определенные изменения в сфере уголовной защиты преступлений против собственности, экономики и экономической деятельности, в том числе вымогательства. Поэтому исследование уголовно-правовых проблем вымогательства имеет большое теоретическое значение. Вместе с тем, в дополнение к изложенному следует добавить, что вымогательство всегда препятствовало жизнедеятельности как любых форм юридических, так и физических лиц.

Цель данной научной статьи - проанализировать уголовно-правовое содержание вымогательства, осветить существующие проблемы в обсуждаемой сфере, а также представить уголовно-правовую характеристику преступления вымогательства, определенную действующим Уголовным кодексом Республики Армения. Вымогательство остается преступлением с высоким уровнем латентности. Не все жертвы вымогательства обращаются в правоохранительные органы, считая этот способ защиты неэффективным. Высокий уровень латентности не позволяет судить об истинной распространенности данного вида преступлений.

В рамках данной научной статьи изучены и представлены уголовно-правовые характеристики преступлений против собственности, а также рассмотрены особенности понятия вымогательства. Проанализированы составы преступления вымогательства, а также рассмотрены его отягчающие обстоятельства, внесены предложения о внесении соответствующих изменений в законодательство, направленных на более четкое определение статьи, предусматривающей уголовную ответственность за вымогательство, и упрощение квалификации таких деяний в практике.

Ключевые слова: вымогательство; шантаж; угроза; хищение; имущество; право; преступление; потерпевший; требование.

¹ Статья была представлена 01.09.2023 и прошла рецензирование 09.11.2023.